

Ջուլիետա Կճանյան

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ. ՄԵՏՐՈՊՈԼԻԱ-ԳԱՂՈՒԹՆԵՐ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ՆՈՐ ԶԱՐԱՑՈՒՅՑԸ

Բանալի բառեր - կայսրության ճգնաժամ, Է. Բըրք, ազատականներ, պահպանողականներ, Մանչեսթրյան դպրոց, Ու. Գլադսթոն, Բ. Դիզրայելի, հոմբուլ:

Վիկտորիա թագուհու կառավարման տարիներին (1837-1901 թթ.) Բրիտանական գաղութային կայսրությունում միաժամանակ երեք զուգահեռ գործընթացներ էին ընթանում՝ զարթոնք, արդիականացում և կերպավորում: Յաճախ 19-րդ դարի բրիտանական իմպերիալիզմը բնորոշում են զուտ ծավալապաշտական դիտանկյունից՝ մոռանալով դրա մյուս կողմը՝ կայսրությունը պահպանելու, ռեֆորմների միջոցով այն արդիականացնելու ձգտումը: Վիկտորիան դարաշրջանում կայսրության ճակատագրի հարցը քննարկման նյութ էր թե՛ մետրոպոլիայում և թե՛ աշխարհով մեկ սփռված գաղութներում: Բոլորն էին համակարծիք փոփոխությունների անհրաժեշտության հարցում, սակայն կարևոր էր, թե դրանք ինչպես պետք է արվեն: Ինդիան այն էր, որ կայսրությունն առաջին ճգնաժամից անհաջող դուրս եկավ: 18-րդ դարի երկրորդ կեսին հյուսիսամերիկյան տասներեք գաղութների անկախացումով Բրիտանական առաջին գաղութային կայսրությունը հայտնվել էր ճգնաժամի առջև¹: Կառավարող վերնախավը, չցանկանալով զիջումների գնալ հյուսիսամերիկյան գաղութներին, արագացրեց և նպաստավոր հող նախապատրաստեց Բրիտանական առաջին կայսրության (1583-1783 թթ.) փլուզման համար:

18-րդ դարում մետրոպոլիա-գաղութներ հարաբերություններում փոխզիջման գաղափարը դեռևս արմատացած չէր բրիտանական կառավարող միջավայրում, թեև կային առանձին անհատներ, որ գիտակցում և կարևորում էին դրա անհրաժեշտությունը: Ի շարս դրանց հիշատակելի է ականավոր պետական գործիչ, քաղաքագետ և ճարտասան Էդմունդ Բըրքը (1729-1797 թթ.)²: Ամերիկյան ճգնաժամի հենց սկզբից Բըրքն այն քչերից էր, ովքեր կողմ էին գաղութների հետ փոխզիջման գաղափարին: Իր ելույթներում և գրքույկներում նա արդարացնում էր բրիտանական իշխանությունների ձևական իրավունքը հյուսիսամերիկյան գաղութներից հնազանդություն պահանջելով, սակայն միևնույն ժամանակ զգուշացնում էր, որ կայսրության միանության պահպանումը ենթադրում էր զգույշ և կշռադատված

¹ Տե՛ս Burt A. L., The Evolution of the British Empire and Commonwealth: From the American revolution, Boston: D. C. Heath and Company, 1956, pp. 43-69:

² Տե՛ս Կոնջորյան Յ., Բրիտանական տերությունը և Ազգերի եվրոպական համագործակցությունը Է. Բըրքի ավանդապաշտության մեջ, Պատմության հարցեր 2, Երևան, «Չանգակ» հրատ., 2013, էջ 123-130:

որոշումներ: Ճշմարիտ պետական իմաստությունը, բացատրում էր նա, թաքնված է փոխշահավետ համաձայնության մեջ. «Հարցը, իմ կարծիքով, այն չէ, թե ունե՞ք դուք իրավունք ձեր ժողովրդին դժբախտ դարձնելու, այլև ձեր իսկ շահերից է բխում նրան երջանկացնելը: Դա այն դեպքը չէ, որ ես կարող եմ այդպես գործել, այլ հումանիզմի, բանականության և արդարության պահանջներին համաձայն այդպես վարվել պարտավոր եմ»¹:

Հյուսիսամերիկյան գաղութների անկախության պատերազմը (1775 – 1783 թթ.) կարևոր ահագանգ էր Բրիտանական առաջին կայսրության կառավարման համակարգին: Կորցնելով տասներեք գաղութները՝ նախկին հարուստ ընդարձակ կայսրությունն այժմ վերափոխվեց փոքր, աղքատ և տնտեսապես թույլ գաղութներից կազմված կայսրության²: Ժամանակ էր հարկավոր, որ նա կրկին վերականգնի իր հզորությունը: Այդ ընթացքում մեծապես կարևորվեցին գաղափարական և քաղաքական այն տեղաշարժերը, որ տեղի ունեցան կայսրության կառավարման համակարգում:

Գրեթե կես դար էր անցել Բրիտանական առաջին կայսրության փլուզումից, երբ 19-րդ դարի կեսերին նույն վտանգը սպառնաց Երկրորդ կայսրությանը: Կայսրությունը այս անգամ կանգնել էր գաղութներից Կանադան կորցնելու վտանգի առջև³: Մետրոպոլիայում տեղի ունեցած փոփոխությունները հիմնախնդիրը առավել ճկուն էին դարձրել: Անհրաժեշտ էր վերանայել գաղութային քաղաքականության հին ավանդույթները: Այս հարցում բրիտանական քաղաքական վերնախավի ներսում գաղափարական-քաղաքական սուր պայքար էր սկսվել: 19-րդ դարի ընթացքում Երկրորդ կայսրության ապագա կառուցվածքի, մետրոպոլիա-գաղութներ փոխհարաբերությունների վերաբերյալ բրիտանական միջավայրում ձևավորվեցին հակոտնյա մոտեցումներ քաղաքական երկու կուսակցությունների՝ թորիների (պահպանողականներ) և վիգերի (ազատականներ) միջև:

Պահպանողականները դեմ էին գաղութներում Էական փոփոխություններ կատարելուն. նրանք առաջնորդվում էին «խաղաղ ժամանակ բարեփոխումներն անօգուտ են, իսկ ճգնաժամի ժամանակ՝ վտանգավոր» սկզբունքով: Թեև գաղութային քաղաքականության նորացման հակառակորդները դեռևս ուժեղ էին նապոլեոնյան պատերազմներից հետո (1803-1815 թթ.)⁴, սակայն արդյունաբերական հեղաշրջման արդյունքում ձևավորվել էին նոր հանրախմբեր ի դեմս առևտրաֆինանսական օլիգարխիայի ու արդյունաբերողների: Նրանց մոտեցումը կայսրության հիմնախնդիրներին միանգամայն տարբեր էր: Նրանք դեմ էին տնտեսական հարաբերությունների կարգավորման հարցում պետության միջամտությանը՝ շեշտադրելով, որ պետության կողմից կարգավորվող ձեռներեցության պայմաններում

¹ Burke Ed., Speech on Conciliation with the Colonies (22 Mar. 1775), <http://press-pubs.uchicago.edu/founders/documents/v1ch1s2.html> (23.04.2016)

² Տե՛ս Burt A. L., նշվ. աշխ., էջ 3-68:

³ Տե՛ս Buckner Ph., "Introduction: Canada and the British Empire", in Canada and the British Empire (The Oxford History of the British Empire), Ph. Buckner (ed.), Oxford: Oxford University Press, 2008, pp. 1-21:

⁴ Տե՛ս Reese T. R., The History of the Royal Commonwealth Society, 1868-1968, London: Oxford University Press, 1968, p. 8:

գաղութները ծառայում են բացառապես մետրոպոլիայի տնտեսական շահերին և բարեկեցությանը:

Ազատականները հանդես գալով սոցիալական այս նոր շերտերի պաշտպանությանը՝ առաջ քաշեցին ազատ ձեռներեցության (Free trade) գաղափարը և պահանջեցին նվազեցնել մաքսային տուրքերն ու հարկերը: 1833 թվականին նրանց հաջողվեց վերացնել ստրկությունը, 1846 թվականին օտարերկրյա հացահատկի ներմուծումը սահմանափակող Հացահատկի օրենքը, իսկ 1849 թվականին՝ նավարկության ակտերը: Հենց այս քաղաքական և տնտեսական տեղաշարժերն էլ կերպարանափոխեցին բրիտանական գաղութային հին համակարգի բնույթը: Հյուսիսամերիկյան տասներեք գաղութների կորուստը ցույց տվեց քաղաքական այն վտանգը, որ բերում էր տնտեսական անհեռատես քաղաքականությունը: Ստրկության վերացումն ու ազատ ձեռներեցության որդեգրումը բարձրացրեցին մնացյալ գաղութների տիրապետման տնտեսական նպատակահարմարության, անհրաժեշտության և օգտակարության հարցերը: Բացառություն էր Հնդկաստանը, որը դեռևս զգալի եկամուտ էր ապահովում հողի հարկահանությունից: Հին գաղութների կառավարումն ավելի ու ավելի ծախսատար էր դառնում¹:

Մետրոպոլիա-գաղութներ հարաբերությունների կարգավորման հարցում կարևորվեցին նաև Մանչեսթրյան դպրոցի ներկայացուցիչների մոտեցումները՝ ի դեմս ազդեցիկ քաղաքական գործիչներ Ռիչարդ Կոբդենի (1804-1865 թթ.) և Ջոն Բրայթի (1811-1889 թթ.)²: Նրանք պաշտպանում էին ծովերի ազատության, ազատ ձեռներեցության սկզբունքները, ջախջախիչ քննադատության ենթարկում անկա գաղութային համակարգը: Իսկ բուն գաղութների նկատմամբ, թերևս, անտարբեր էին. համարում էին, որ դրանց անջատումն անխուսափելի է: Նրանք առաջ էին քաշում «ծնողների և զավակների» տեսությունը, ըստ որի գաղութները հատուկանալով՝ անխուսափելիորեն ինքնուրույն են դառնում նման այն վիճակին, երբ հասած պտուղն ընկնում է ծառից: Այս տեսակետն առաջին անգամ հիմնավորել էր ֆրանսիացի քաղաքական գործիչ, տնտեսական լիբերալիզմի հիմնադիր Ռ. Ժ. Տյուրգոն (1727-1781 թթ.)՝ Ամերիկյան հեղափոխությունից դեռևս քսան տարի առաջ: Նա զգուշացնում էր, որ գաղութների ինքնուրույնությանը հաջորդելու է անխուսափելի անջատումը³: Մանչեսթրցիների նման դիրքորոշումը, սակայն, ամենևին էլ չէր նշանակում, թե նրանք ուզում էին անհապաղ լքել գաղութները, թեև հիմնականում այս կետն էին շահարկում նրանց քաղաքական հակառակորդները՝ մեղադրելով կայսրության հանդեպ կրավորականության և վատատեսության մեջ: Պատասխանելով մեղադրանքներին՝ Ջ. Բրայթն ասում էր. «Տարածքային թարմ ձեռքբերումները նոր բեռ են ավելացնում Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի ժողովրդի վրա, մենք վերցնում ենք բեռը և վճարում տուգանքներ: Այս քաղաքականությունը կարող է թվացյալ փառք տալ գահին և ապահովել լրացուցիչ թռչակներ

¹ St' u Parsons T., The British Imperial Century, 1815-1914, A World History Perspective, Lanham, MD: Rowman & Littlefield, 1999, p. 12:

² St' u Bresiger G., "Laissez Faire and Little Englanderism: The rise, fall, rise, and fall of the Manchester School", Journal of Libertarian Studies 13, No. 1, 1997, pp. 45-79:

³ St' u Egerton H. E., A Short History of British Colonial Policy, 4th edition, London: Methuen, 1913, pp. 3-4:

միայն որոշակի սահմանափակ և արտոնյալ խավի համար, բայց մեզ՝ հասարակ մարդկանց բերում է լոկ ծախսեր, պարտքերի ու հարկերի ավելացում՝ մեծացնելով պատերազմի վտանգը աշխարհի յուրաքանչյուր հատվածում»¹:

Մանչեսթրցիներին աստիճանաբար սկսեցին պիտակել իբրև «Փոքր Անգլիայի» կողմնակիցներ²: Հիրավի, նրանք մտածում էին, որ գաղութներին քաղաքական ինքնուրույնություն տրամադրելը Մեծ Բրիտանիային չի կարող վնաս հասցնել, հակառակը՝ նա կազատվի գաղութները պահելու ավելորդ ծախսերից: Միայն տնտեսական և քաղաքական հզորության շնորհիվ նա կապահովի իր գերիշխանությունը: Մանչեսթրցիների արմատականությունը անհանգստություն առաջացրեց առավել չափավոր գաղութային ռեֆորմատորների մեջ, որոնցից աչքի էին ընկնում Ու. Մուլվորտը, Չ. Բուլլերը, Էդ. Ուեյկֆիլդը, Ջ. Միլլը: Ժխտելով գաղութարարության հին հայացքները՝ նրանք համամիտ չէին նաև մանչեսթրցիների հետ: 1849 թվականին Էդ. Ուեյկֆիլդը գրում է. «Ես կարծում եմ, որ կայսրության մեծությունն ու հեղինակությունը զգալի եկամուտ է ապահովում նրա բոլոր բնակիչների և հատկապես նրանց համար, ովքեր ապրում են Բրիտանական կղզիներում: Առավելությունը նրանում է, որ նման հսկայական տարածքների տնօրինումն արդեն իսկ Անգլիային դարձնում է տերություններից հզորագույնը: Ճիշտ է, գաղութները ծախսատար են, բայց այդ ծախսերը ամենաշահավետ ներդրումներն են մեզ համար, զի դրանք մեր կայսրության անունը դարձնում են ուժ, որը գերազանցում է բոլոր նավատորմերն ու բանակները»³:

Մանչեսթրցիների և ռեֆորմատորների հիմնական տարբերությունը թերևս գաղութների պահպանման հարցի նկատմամբ վերաբերմունքի մեջ էր: Եթե առաջինները կարծում էին, որ ժամանակի ընթացքում սպիտակ կամ վերաբնակեցված գաղութների անջատումն անխուսափելի է, ապա երկրորդները հնարավոր էին համարում գաղութների և մետրոպոլիայի միջև պաշտոնական կապերի պահպանումը:

Ժամանակները փոխվել էին, գաղութներում տիրող իրադրությունն աստիճանաբար դուրս էր գալիս հսկողությունից. այլևս անհնար էր գաղութները պահել հպատակության մեջ՝ միաժամանակ փորձելով խուսափել կայսրության կազմալուծման վտանգից: Այն, որ 19-րդ դարի 30-40-ական թվականներին գաղութ-մետրոպոլիա փոխհարաբերությունների հարցի շուրջ է. Բըրքի հայացքները կիսում էին արդեն շատերը, և ի հայտ էր եկել տեսաբանների մի ամբողջ խումբ, որոնց գաղափարաբանության հիմքում ընկած էին փոխզիջման և ազատության պատկերացումները, հնարավորություն էր ստեղծում գտնելու «ոսկե միջին» տարբերակը:

Կանգնելով ապագայի այլընտրանքների առջև՝ Բրիտանական կայսրությունը կարիք էր զգում խոշոր անհատների, որոնց նորարական գաղափարներով և գործարար կամքով հնարավոր կլիներ մարտահրավերներին համարժեք պատասխաններ տալ: Կայսրության պատմության այս վճռորոշ փուլում քաղաքական ասպարեզում հայտնվեցին երկու խոշոր գործիչներ, որոնք, անկախ իրենց գաղափարական

¹ Hall C. D., British Commonwealth of Nations, London: Methuen, 1920, p. 167.

² St' u Galbraith J. S., "Little Englanders", Current History 27, No. 160, December, 1964, pp. 353-354:

³ Wakefield Ed. G., A View of the Art of Colonization: With Present Reference to the British Empire; in Letters Between a Statesman and a Colonist, Ontario: Batoche Books, 2001, p. 33.

հակասություններից, ռազմավարական և գործողութենական ծրագրերի տարբերություններից, ձգտում էին «խաղաղ հավասարակշռություն» ապահովել կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության համար: Այդ գործիչներն էին Ուիլյամ Գլադսթոնը (1809-1898 թթ.) և Բենջամին Դիզրայելին (1804-1881 թթ.):

Ու. Գլադսթոնը 19-րդ դարի երկրորդ կեսի առավել նշանավոր քաղաքական գործիչներից էր: Իր գործունեությունը սկսել է 1832 թվականին 23 տարեկանում մուտք գործելով խորհրդարան որպես թորիների ներկայացուցիչ: Սկզբնական շրջանի իր ելույթներում նա հիմնականում սատարում էր Իռլանդիայի հանդեպ հալածանքները, դեմ էր խորհրդարան հրեաների մուտք գործելուն, ստրկության արգելքին, 1832 թվականին խորհրդարանական բարեփոխումներին: Գլադսթոնի համար ցանկացած փոփոխություն վտանգ էր պարունակում, ուստի ճշմարիտ քաղաքական գործիչ գլխավոր ինդիքը համարում էր հաստատված կարգի պահպանումը¹: Սակայն հընթացս ժամանակի՝ նրա քաղաքական գաղափարներն ու համոզմունքները զարգանում են այն աստիճան, որ նա անցում է կատարում ազատականների ճամբար: Բացի գաղափարական նկատառումներից, նման կերպափոխության վրա ազդում է նրա գործնական կյանքը². այս տարիներին նա զբաղեցրել է առևտրի (President of the Board of Trade), գաղութների (Colonial Secretary), երկու անգամ ֆինանսների (Chancellor of the Exchequer) նախարարների պաշտոնները: Գլադսթոնն արդեն հստակ գիտակցում էր սոցիալական և քաղաքական ոլորտներում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: 1850-ականներին նա վերջնականապես խզեց կապերը պահպանողականների հետ: 1868 թվականին դարձավ ազատականների առաջնորդը Զամայքների պալատում: 1868-1894 թվականներին գլխավորելով ազատականների կուսակցությունը՝ չորս անգամ ընտրվեց վարչապետ (1868-1874, 1880-1885, 1886 թ. փետրվար-հուլիս, 1892-1894 թթ.):

Պաշտոնավարության տարիներին նա ձեռնամուխ է լինում Բրիտանական տերության ներքին և արտաքին քաղաքականության նոր ուղեգծի մշակմանը: Մի կողմ թողնելով բրիտանական կյանքի տարբեր հիմնախնդիրներում Գլադսթոնի բարեփոխումները՝ առանձնակի սևեռումի ինդիք ենք դարձրել գաղութային քաղաքականության գլադսթոնյան տեսլականը, որի իրագործումը բախտորոշ եղավ Բրիտանական կայսրության շարունակականության համար:

Ժամանակի հրամայականն էր՝ վերանայել մետրոպոլիայի և գաղութների հարաբերությունները և նոր հարացույցեր մշակել դրանք համակարգելու համար: Եվ 1850-ականների կեսին Գլադսթոնը սկսեց մշակել «Կամավորության սկզբունքով կառուցված կայսերական կապերի» հղացքը, որի հիմնական դրույթներն արտահայտվեցին «Մեր գաղութները» ելույթում. «Կառավարեցե՛ք նրանց համաձայն ազատության սկզբունքի, թույլ մի՛ տվե՛ք, որ զգան լուծ իրենց պարանոցին, թու՛յլ տվե՛ք նրանց հասկանալ, որ հարաբերությունները ձեր և նրանց միջև կապվա-

¹ St' u John I. St., Gladstone and the Logic of Victorian Politics (Anthem Perspectives in History), London and New York: Anthem Press, 2010, p. 3:

² St' u Partridge M., Gladstone, Routledge Historical Biographies, London and New York: Routledge, 2003, pp. 39-106:

ծուրթյան հարաբերություններ են: Եվ միության շարունակության պարագային հնարավորություն տվեք գաղութաբնակներին լինելու դատավորներ, զի նրանք կլինեն լավագույն դատավորները՝ գիտակցելով, որ կարող են շարունակել ձեզ հետ լինել կամ ոչ¹»: Այլ խոսքով՝ մետրոպոլիա-գաղութներ հարաբերություններում Գլադսթոնը կարևորում էր ոչ թե պարտադրանքի, այլ կամավոր համագործակցության սկզբունքը, որը պետք է հենվեր մշակութային ավանդույթների նմանության, քաղաքական կառույցների ընդհանրության ու տնտեսական հետաքրքրությունների վրա՝ կարևորելով, իհարկե, նվիրումն անգլիական թագին: Նման համագործակցության հնարավոր էր հասնել նախ և առաջ գաղութներում պատասխանատու կառավարության համակարգի և հոմրուլի՝ տեղական ինքնակառավարման իրավունքի տարածման շնորհիվ²:

Բրիտանական գաղութներից 1867 թվականին Կանադային դոմինիոնի կարգավիճակի տրամադրումն այս հղացքի իրագործման առաջին իրական քայլը դարձավ³: Յետագայում հոմրուլի կիրառումը վերաբնակեցված մյուս գաղութներում զուտ ժամանակի խնդիր էր: Առավել ակնառու էր պայթարը իռլանդացիներին հոմրուլի իրավունք շնորհելու համար: Ազատականներն իրենց ակնավոր առաջնորդ Ու. Գլադսթոնի գլխավորությամբ դաշինքի մեջ մտան իռլանդական ազատականների հետ: Յամաձայնության խնդիրը Իռլանդիայի ինքնավարության հարցն էր: Մի կողմ թողնելով պայթարի մանրամասները՝ նշենք, որ բարձրացնելով այս հարցը և, անկախ քննադատությունից, պայթարելով դրա իրագործման համար՝ Գլադսթոնին հաջողվեց զգալիորեն կտրուել բրիտանական տիրույթների և դրանց հետ հարաբերությունների վերաբերյալ հասարակության շրջանում առկա կարծրատիպերը: Նրա շնորհիվ բրիտանական միջավայրում այս հարցին շատերն այլ կերպ սկսեցին նայել:

Այսպիսով, 1868-1874 թվականներին Գլադսթոնի առաջին կառավարությունը որդեգրեց գաղութների ներքին գործերին չմիջամտելու, ազատ ձեռներեցության (Free trade) սկզբունքների շրջանակում տնտեսական սերտ համագործակցության և ինքնակառավարման հետագա զարգացման քաղաքականություն⁴: Կայսրությունն ըստ նրա պատկերացման՝ ազատ ընտրության սկզբունքի վրա հիմնված հասարակությունների միավորում էր: Ազատականները կարծում էին, որ վերաբնակեցված գաղութները հնարավոր չէ պահպանել կայսրության կազմում ուժի և հարկադրանքի միջոցով: Եվ Գլադսթոնը հոմրուլի սկզբունքը համարում էր հենց այն տարբերակը, որ կարող էր բավարարել երկու կողմերին: Նա առաջ էր անցել իր ժամանակից և նրա գաղափարները դեռ ընդունելի չէին շատերի համար⁵:

¹ Gladstone W. E., *Our Colonies: An address delivered to the Members of the Mechanics' Institute, Chester, On Monday the 12th November, 1855*, London: John W. Parker and Son. West Strand, 1855, pp. 20-21.

² Տե՛ս John I. St., *Gladstone and the Logic of Victorian Politics...*, p. 225:

³ Տե՛ս Buckner Ph., "The Creation of the Dominion of Canada", in *Canada and the British Empire (The Oxford History of the British Empire)*, Ph. Buckner (ed.), Oxford: Oxford University Press, 2008, pp. 66-86:

⁴ Տե՛ս Cain P., *Empire and Imperialism: The Debate of the 1870s*, Bristol: Thoemmes Press, 1999, p. 14:

⁵ Տե՛ս Schuyler R. L., "The Climax of Anti-Imperialism in England," *P.S.Q.*, XXXV (1921), pp. 263-270:

19-րդ դարի 70-ական թվականներին կայսրության սպիտակ գաղութներում նկատելի դարձավ տնտեսական բուռն աճ՝ պայմանավորված ներգաղթի անսահման չափերով և ներդրվող կապիտալի գանգվածով, որը նպաստում էր ազգային բուրժուազիայի և ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, ինչը, իր հերթին, արտացոլվում էր մետրոպոլիայի հետ հարաբերությունների վրա: Ճիշտ է, ազատական կառավարությունը աչքի ընկավ իր բարեփոխիչ գործունեությամբ, սակայն հասարակության մեծ մասը վերապահությամբ էր ընդունում դրանց արդյունքները

Նոր տարածքների նվաճման համար մրցավազքի պայմաններում 1870-ական թվականներին սրվել էր միջազգային դրությունը: Դրան լրացուցիչ խթան հաղորդեց 1870 և 1871 թվականներին Իտալիայի և Գերմանիայի միավորումը, որ եականորեն խախտեց ուժերի ավանդական հավասարակշռությունը Եվրոպայում:

Անհանգիստ էր վիճակը Բրիտանիայում. կայսրության միասնության հին գահավարի կողմնակիցները համախմբվեցին պահպանողականների կուսակցության առաջնորդ Բենջամին Դիզրայելի շուրջ (1804-1881 թթ.): Դիզրայելին գնահատելով միջազգային իրավիճակի բարդությունը և առաջիկայում սպասվելիք փոփոխություններն ու մարտահրավերները՝ հասկանում էր, որ նման նպաստավոր պայմաններում կայսրության միասնության հարցի շահարկումը լավ հնարավորություն է իշխանությունն ազատականներից խլելու համար: Յարկ Է, սակայն, ընդգծել, որ պահպանողականներն այժմ նախկինը չէին. նրանք անշեղորեն կերպափոխվում էին ըստ պատեհության. 1852 թ. Մանչեսթրյան դպրոցի ազդեցությամբ, Դիզրայելին ևս համոզված էր. «Այս խղճուկ գաղութները մի քանի տարիներ անց բոլորն էլ կանկախանան: Նրանք ասես երկանաքար լինեն մեր վզին»¹: Սակայն 20 տարի անց իշխանության գալով՝ զարկ տվեց ծավալապաշտությանը՝ մոռացության մատնելով իր նախկին հավաստիացումները:

Կայսրության քաղաքական նոր ուղեգծի ընտրության առումով վճռորոշ նշանակություն ունեցավ 1872 թվականին Բյուրեղյա պալատում Դիզրայելի ելույթը, որով վերջնականապես ամրագրեց պահպանողականների հակումն առ իմպերիալիզմը. «Երբ ես ասում եմ «իմպերիալիզմ», ապա բառն օգտագործում եմ դրա ամենամաքուր և ամենաբարձր իմաստով: Նկատի ունեմ, որ անգլիացիները և հատկապես Անգլիայի աշխատավորները հպարտանում են իրենց պատկանելությամբ այս հզոր կայսրությանը և ցանկանում են պահպանել նրա մեծությունը»²:

Նրա կարծիքով՝ եթե մյուս ազգերն այդ ժամանակ միավորվում և համախմբվում էին՝ ամրապնդելով իրենց պետականությունը, Մեծ Բրիտանիան կործանվում էր ազատականների կործանիչ քաղաքականության հետևանքով³: Դիզրայելին վտանգ էր տեսնում հոմրուլի իրավունքի ընդլայնման մեջ: Բրիտանիան, ըստ նրա, կանգնել էր ընտրության առջև՝ կամ վերածվել եվրոպական փոքրիկ

¹ To Lord M., August 13, 1852, in *Memoirs of an Ex-Minister: An autobiography*, by J. H. H. Malmesbury, London: Longmans, Green, and Co., 1885, pp. 260-261.

² James L., *The Rise & Fall of the British Empire*, London: Abacus, 1998, p. 196:

³ St' u Currey C. H., *British Colonial Policy 1783-1915*, p. 162:

պետության՝ «Փոքր Անգլիայի», կա՛մ պահպանել գերտերության կարգավիճակը՝ մնալով Մեծ Բրիտանիա:

1874 թվականին խորհրդարանական ընտրություններում ազատականները պարտվեցին և Գլադսթոնը հրաժարական տվեց: Գալով իշխանության՝ Դիզրայելին քննադատեց Գլադսթոնին «նրա արտաքին տկար քաղաքականության համար»¹: Նա կազմեց կառավարություն, որն առաջնորդվում էր նվաճողականության տեսլականով և ռազմավարական կարևորության նոր տիրույթներ միակցելով: Դիզրայելիի ջանքերով նաև թագուհի Վիկտորիան 1878 թվականին հռչակվեց Յնդկաստանի կայսրուհի՝ այդ կերպ ամրապնդելով բրիտանական ներկայությունը Յնդկաստանում²:

19-րդ դարի 80-ական թվականների առաջին կեսին խորհրդարանական ընտրություններում ազատականները Գլադսթոնի գլխավորությամբ կրկին գալով իշխանության՝ այլևս չէին փորձում փոխել պահպանողականների արտաքին քաղաքական ուղեգիծը. հասարակության և ղեկավարող վերնախավի զգալի մասը պաշտպանում էր ծավալապաշտական քաղաքականությունը³: Որքան էլ Գլադսթոնը դիմադրում էր, սակայն հարկադրված էր ներքաշվել Եգիպտոսի և Յարավային Աֆրիկայի նվաճման գործընթացի մեջ⁴:

Այսպիսով, երկու գործիչների վճռորոշ քայլերը նոր երանգ ու իմաստ հաղորդեցին բրիտանական իմպերիալիզմին և արտաքին քաղաքականությանը: Երկուսն էլ զգում էին Բրիտանիայի և մնացյալ աշխարհի միջև հարաբերությունների փոփոխությունները, և երկուսն էլ ձգտում էին պահպանել Բրիտանիայի առաջատար դերը աշխարհում:

Դիզրայելին, անհանգստացած կայսրության ճակատագրով, բայց իմպերիալիզմի իր ծրագրով, առաջարկում էր լուծում միայն մեկ տասնամյակի համար: Մինչդեռ Գլադսթոնը նախապատվությունը տալիս էր գաղութների ինքնակառավարմանը, հարկադրանքի փոխարեն՝ փոխզիջմանը: Նշանավոր պատմաբաններ Ջոն Մորլին և Փոլ Ջենեփելնդը Գլադսթոնին նկարագրում են որպես նախակարապետ, եթե ոչ «հայր» արդի Յամագործակցության գաղափարի⁵: Ուշագրավ է, որ Գլադսթոնն իր այս տեսլականը զարգացրել է հիմնվելով Էդմունդ Բըրքի ամերիկյան գաղութների ճգնաժամի հետ կապված վերլուծությունների վրա, որ կայսերական իշխանությունը կարող է միայն հիմնվել բրիտանացիների և բնիկների հետաքրքրությունների արդարացի հաշտեցման վրա⁶: Եթե 18-րդ դարի երկրորդ կեսին Բըրքը և իր սակավաթիվ կողմնակիցները մշակում էին Բրիտանական կայսրության բանական ապակենտրոնացման գաղափարներ, ապա 19-րդ դարի երկրորդ կեսի ազատա-

¹ Lewis C. J., "Theory and Expediency in the Policy of Disraeli", *Victorian Studies*, 5 (1961), p. 247.

² St' u Sturgis J., "Britain and the New Imperialism", in *British Imperialism in the Nineteenth Century*, ed. by C. C. Eldridge, New York: St. Martin's Press, 1984, p. 88:

³ St' u James L., *The Rise & Fall of the British Empire*, p. 204:

⁴ St' u Partridge M., նշվ. աշխ., էջ 179-190:

⁵ St' u Biagini E., "Gladstone and Britain's Imperial Role", *Journal of Liberal Democrat History*, 20, Autumn 1998, p. 34:

⁶ St' u "Edmund Burke: Speech on Conciliation with America, House of Commons, 22 March 1775", in *The Concept of Empire: Burke to Attlee 1774-1947 (The British Political Tradition)*, Book Six, ed. by Bennett G., London: Adam & Charles Black, 1962, pp. 40-43:

կան գործիչները դրանք համակարգեցին և վերածեցին քաղաքական ծրագրի: Նրանք մշակեցին հոմբուլի տեսությունը, որը ինչպես ցույց տվեց պատմությունը, մի ներուճակ հարացույց էր՝ ունակ վերակառուցելու Բրիտանական կայսրությունն առաջիկա փորձությունների ճանապարհին:

Միով բանիվ, Գլադսթոնը գործում էր քաղաքակրթական ժամանակի ընդլայն տևողության ծիրում, մինչդեռ նրա հակառակորդ պահպանողականների ծիրը առտնին-առօրեական ժամանակն էր: Երկուսն էլ ճիշտ էին իրենց ժամանակի և արժեքանության մեջ: Սակայն մերօրյա հեռվից ակներև է դառնում, որ պատմության ընտրյալը Ու. Գլադսթոնն էր:

Джулиета Кчанян, Формирование Второй Британской империи: Новая парадигма взаимоотношений между метрополией и колониями, - Цель статьи представить видения о будущем Британской империи и различные точки зрения о взаимосвязях между метрополией и колониями сформированными в британской интеллектуальной среде в результате кризиса Второй империи в 19-ом веке. В рамках этих проблем автор изучает концепцию премьер-министра Уильяма Юарта Гладстона о британской колониальной политике, целью которого было развитие партнерства самоуправляющихся колоний как способа избежать распада Империи.

Julieta Ktshanyan, Formation of The Second British Empire: New Paradigm of the Relationships of Metropolis and Colonies, - The aim of the paper is to explore the 19th-century visions of the future of the British Empire and different viewpoints on interrelations between the metropolis and colonies formed in the British intellectual milieu as a result of the Second Empire crisis. Within the scope of these problems, the author examines the concept of Prime Minister William Ewart Gladstone that sought to develop a partnership of self-governing colonies as a way of escaping the collapse of the Empire.

Ջուլիետա Կճանյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս, ասպիրանտ:

